Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 17-ի «Հայաստանի Հանրապետության պետական մարմինների ծառայողական ավտոմեքենաների հատկացման, շահագործման և սպասարկման մասին» N 194-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման N 1 հավելվածի 5^3-րդ կետում «99» թիվը փոխարինել «88» թվով, իսկ 5^5-րդ կետի «ժգ» ենթակետում «1» թիվը՝ «12» թվով.

2) որոշման N 2 հավելվածի 5-րդ և 5.1-ին կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

5.	ՀՀ արդարադատության նախարարություն	22	10	12
5.1.	ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայություն	89	1	88

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: